ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 580-Ա

09 դեկտեմբերի 2020 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԵԼԱՆՅԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԼԱՐԻՍԱ ՂԱՐԱԲԱՂՑՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ և 163-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի պահանջներն ու Մելանյա Հովակիմյանի անձնական դիմումն

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մելանյա Հովակիմյանին 2020 թվականի դեկտեմբերի 10-ից դեկտեմբերի 23-ը ներառյալ տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 10 աշխատանքային օր:

2. 2020 թվականի դեկտեմբերի 10-ից դեկտեմբերի 23-ը ներառյալ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների իրականացումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Լարիսա Ղարաբաղցյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

3. Մելանյա Հովակիմյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի դեկտեմբերի 24-ից:

09.12.2020

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ